

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐԲ

### Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. 1923 էջ 301)

Ը.

### ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆԳԷՏԻ ԱՆՊԷՏ

Զեռագրին պարունակած Անդամազնեու-  
թիւնը իր յարակից դարմանութեանական  
մասովը կ'աւարտի 70րդ էջին կէսին վրայ.  
հոն կը սկսի ուրիշ գործ մը, որ Ախրաւ-  
պատին անունը կը կրէ. ունի նախ իւր  
ցանկը ԻԻ գլուխներու, և է հետեւելը.

Առաջին դասուն վասն ամենայն ցեղ շա-  
րապնոյ և բմպեկեստանց: — Երկրորդ դասուն  
վասն ամենայն ցեղ բուռպնոյ և յիշեն զգլխան  
նոցա: — Երրորդ դասուն վասն ամենայն  
ցեղ փարպարտաւոյ և անուշած իրաց: —  
Չորրորդ դասուն վասն ամենայն ցեղ աշխա-  
րիմնոյ թէ որպէս յիշեն զինքն: — Հին-  
գերորդ դասուն որ յիշէ զմաճառնոյ և զհաղ-  
վածոց նոցին և պանկոյն: — Վեցերորդ  
դասուն որ յիշէ զհոտարեւն և զկազմելիք նոցա  
և պանկոյն: — Եօթերորդ դասուն որ յիշէ  
զանազան քրիստոնէի և զօրոտիւն նորա և  
պանկոյն: — Ութերորդ դասուն որ յիշէ  
զմասարիշէին և զկարեւն և զգլխան նորա և  
պանկոյն: — Իններորդ դասուն որ յիշէ զա-  
նազան սփռփիւն և ծծկեկաց նոցա և զօ-  
րոտեան: — Տասներորդ դասուն որ յիշէ  
զանազան մասպոտիւնոյ և եփկոց նոցա ի  
պատենն տալոյ մարդոյ: — Մեծասանե-  
րորդ դասուն որ յիշէ զառախնին և զգլխան  
և զիզկելիք նոցա: — Երկուսասներորդ  
դասուն որ յիշէ զամենայն ցեղ հուպերն և  
զիշեն և զտարն թէ ինչպէս եւ: — Երեք-  
սասուն. դասուն վասն ամենայն ցեղ աշխ դե-  
ղերոյ և յինկոյ և յմանալոյ և յունջ նոցա:  
— Չորիքսասուն. դասուն յիշէ զամենայն  
ցեղ աշխ շափնին և զկազմելիք և զհարեւ  
նոցա: — Հնգեսասուն. դասուն վասն ա-

մենայն ցեղ ձիւրերոյ և եփեւաց նոցա և  
օծկոց և պանկոյ նոցա: — Վեցսասուն. դասուն  
տիւնտնոն զօրոտեան նոցա թէ ինչպէս առ-  
նեն օտաւ: — Եօթսասուն. դասուն վասն  
սպիղանաց օգտութեան և զօրոտեան նոցին:  
— Ութսասուն. դասուն որ յիշէ զհօնալոյն որ  
է հոտաւ դեղերն և յոծման շափերն: —  
Ինեսասուն. դասուն որ յիշենք ըզգորոտեան և  
ինքն և ցամաք դեղերն և ցանկելիքն: —  
Քսասն դասուն յիշենք զայլ մայնամեկն որ  
եփին և զգործաւորութեան նոցա: — Քսասն  
և մէկ դասուն որ յիշէ զդեղերուն զպատեկին  
որ և փոխանակ նոցին զգծածն: — Քսասն  
և երկու դասուն որ յիշէ դեղերուն զգլխա-  
նալուն ամեն, և այլ զմարաքապ դեղերուն  
և այլ ամենայն ցառոց դեղ: — Քսասն երեք  
դասուն յիշէ զդեղերուն զօրոտիւն և զանազանք  
է լեզուք: — Քսասն և յորս դասուն յիշէ  
զկիւրքն և զլուրերն և զնոպետաւուն տըմ և  
մայալուն:

Սա ալ Ամբրտովաթի գործն է. ինչ-  
պէս կը յայտնեն այս ցանկէն առաջ զորոտած  
յիշատակութեան մը սկզբնական և վերջին  
քանի մը տեղերը, երբ կ'իմացնեն՝

« Յանկ և գրոյս Ախրապատին որ առի  
« եւ անպիտան և անործան ծառայս ի յա-  
« ռապ գրոյ որ ժողովել է զինքս Մուսի-  
« պին Մուսմունն, և ես յիշեմ զուրեւն  
« խօսքն և զրեւմ ի հայ լեզու, բայց ի  
« յայս արապ գրքեր որ մուսպիմմայմունն  
« է շինել երբայեցոցն՝ նա զդեղերուն  
« զօրութիւն չ'է գրել կատարելութեամբ և  
« ոչ զքնութիւն և ոչ զգործքն. նա՛ ես  
« տեսա որ ի յախրապատին առանց մու-  
« ֆրատաթի չի լինար, որ է մէկ մէկ  
« դեղերն, նա շինեցի զխաւապաթնին  
« (կարգալ՝ զախրապատին) լման, և զմը-  
« ֆրատաթն այլ ի լման և զանուանքն  
« զրի ի կարգին, Ե լեզուով. յառաջն հա-  
« յերէն և յունաբէն, զաղմատեւրէն, յա-  
« ռապնեւրէն, և պարսկեւրէն, և զքնութիւն  
« և զաղէկն զկերպն և զառնելիքն և զփո-  
« խանն և զօգտութիւն ամենայն անձին,  
« և շինեցի զգիրս զայս հանց զիրք ով

« որ յատար լինի և կամ յաշխապ նա  
« իւրենն այս գիրքս հերիք է. և որ զինքս  
« կարգաւ և ուսնի զամենայն գործ բժըշ-  
« կութեան, և զմութրատաթ առնուն՝ նա  
« լինի կատարելութեամբ գէտ այս արուեստ-  
« տիս և զանազան որպէս որ գրած է նա  
« իւր բանն կատարի անսղալ, և զանա-  
« զան թարգմանիս տեսնուս և զարմանաս  
« զղեղերուն զգործն աստուծոյ ողորմու-  
« թեամբն: Բայց ով որ ի սոցանէ բան  
« օգտի՝ նա գիտենա թէ ինչպէս է շիներ  
« անարժան ծառայն Աստուծոյ Ամիրդով-  
« վէթն բժիշկն, և տեսնուր թէ որպէս է  
« յաւելցուցեր զգիրքն և ինչպէս է ձեւեր  
« զղեղերուն զօրութիւնն և զայն որ ի  
« կարգին է, որ ի պէտք է մեզ »:

Այս յառաջարանական մասը նոյնու-  
թեամբ հրատարակած է ողբացեալ Հ. Ղ. Վ.  
Յովնանեան իւր « Հետազոտութիւնք  
Նախնեաց Ռամկորեկին վրայ » կարեւոր աշ-  
խատութեանը մէջ<sup>1</sup>, և պէտք է ըսել, թէ  
հոն Ամիրտովմաթի յիշած հեղինակին ա-  
նունը աւելի բացայայտ է զուրած քան  
հոս Հ. Ղեւոնդի հրատարակութիւնը կը  
գրէ. « ասի ես անպիտան և անարժան ծա-  
ռայս ի յարսպ գրող և ի ՄԻՆՆՍՍ՝ձԻ ՏՈՒՆ-  
« ՔԱՆԷՆ, որ ժողովել էր զինքն ՄՈՒՍԻ  
« ՊԵՆ ՄԱՅՄՈՒՆՆ »<sup>2</sup>, ինչ որ որոշ չէ այս  
ձեռագրին մէջ:

Դեղաբանութեան և Դեղագուգութեան  
գիրք մ'է, իր ատենի կատարելութեամբ,  
որու մասին շատ մանրամասն գրած է  
Հ. Ղ. Յովնանեան և կու տայ լիարուստ  
զաղափար:

\*

Այս ցանկին յաջորդ էջին վրայ սակայն  
տարբեր գրելչ մը կը շարունակէ հատորին  
պարունակած նիւթերու շարքը, և նոր  
ցանկ մը եւս կը յաւելու գրելով.

ԻՉ. վասն խրատ վարդապետաց, վասն  
աշակերտաց, վասն ուսանելոյ: — ԻԷ. վասն  
ամենայն ցեղ եղանակի և շտի, որ է մատու:  
— ԻԸ. վասն ջրերոյ թէ որ չորն է շուս:  
— ԻԹ. վասն եղանաց բարդակին: — Լ.  
վասն զինոյ թէ որն լաւն, և այլ գրողքը:  
— ԼԱ. վասն դեղերոց բառարան լեզվէ ի  
լեզու: — ԼԲ. վասն բնութեան երիտասար-  
դաց և ծերոց: — ԼԳ. վասն մեկնութեան  
լորից տարերաց: — ԼԴ. վասն խրատոյ  
յոգեակին, թէ որպէս է: — ԼԵ. բառարան  
ամենայն ցառոց: — ԼԶ. վասն օգնութեան  
առագ բրիւթի, որ է բրիւթ ֆուտոյ: —  
ԼԷ. վասն պատմութեան լուսակին, որ է  
սպրիտուանման, և փիլոսոփի: — ԼԸ.  
թշկարան մեծին Գալիլեոսի արարեալ: —  
ԼԹ. վասն տուրոյ ցառին հովի կամ ի տաքի  
և ծրծրացալի կրկին: — Խ. վասն Սաքրոս  
ցառի ի հովի կամ ի տաքի:

\*

Այսպէս Ախրապատինը կը գրաւէ 73-  
308 էջերը. ասոր առաջին էջին վրայ կը  
տեսնուի կնիք մը փոքրիկ, որուն վրայ  
կը կարդանք « ՔՐԻՍՏՈՍԻ ԹԻՆ ՄԻՆԱՍ »  
երկաթագիր և 1708 թուականը: Նոյն  
այն կնիքը կը գտնենք նաև 292րդ էջին  
վրայ և ներքեւն ալ նոտրագիր,

« Միևսու որդի տէր յՄինսի  
« զեղ թշկարանիս  
« Բիւն Ռեմի »: ՎՐԶ. (1157-1708)

Երեք տող խօսքը, որ կը յայտնէ թէ  
ձեռագիրս իւր ընդօրինակութենէ՝ այսինքն

1. Վիլնա, Մաս Ա. Տետր Բ. էջ 381.

1668էն դար մը յետոյ պատկանած է ՏԷՐ 80ՎՆԱՆՆԵՍԻԱՆ ՄԻՆԱՍ անուն անձին։

Փասնի մը թերթ աղիւսակածն զբուծիւններ կը յաջորդեն այս գլուխին, յետոյ կը սկսին կարգաւ իջն մինչև իս նշաւ նակուած նիւթերը, որոնք կ'աւարտին 481րդ էջին վրայ և քաղաքին են՝ ըստ մեծի մասին՝ Ամիրտովլարի գործերէն։

481րդ էջէն կը սկսի Միխիթար Հերացիի Զեյնալի Միխրատրոսեան մաս մը և յետոյ այս բժիշկին Դարմանարանքներ՝ զրեթէ յար և նման վարդ Մրտիշցիի ընդօրինակածին, զոր ներկայացուցի նախապէս։

Այս գործին աւարտումէն յետոյ, 725րդ էջին տակը կը կարդանք Զեռագրին ամենակարեւոր մէկ Յիշատակարանը 5 տող գրուած, որ է՝

« Կատարեցաւ յառաջարանոսիս տպրաւս պատին : Եւ նուաստ ցրիչս տատանուն « Գրիգորս յիւնցեք ո՛վ եղբայրք, և զհայրն « իմ Մատուրն, և զմայրն իմ Սանդոխտն, « և զհայրենի պսպն իմ Լաքանն և Կոյաւ « Կիցն իւր Գօգիկն, և մայրենի պսպն իմ « ամի Սարգիսն, և զկոյակիցն իւր Մէր « խարունն որ հանգուցեալ են առ Քրիստոս « և մի քերական ողորմի ասեք քրիստոս ձեզ « ողորմի, Գրվեցաւ սուրբ բան մեր քվին « Իմօք » : (1117 + 551 = 1668) :

Եւ քիչ մը վերեւ տեսանք, որ կարճ Յիշատակարանի մը մէջ կը յիշուէր այս 1668 թուականը՝ իբրև ձեռագրին սկզբնատրութեան թուական, իսկ այս տեղ՝ իբրև վերջատրութեան ժամանակ՝ ինչ որ կրնայ մեզ ենթադրել տալ, թէ Գրիգոր՝ ԳՐԻԳՈՐ՝ ՈՐԴԻ ԵԱՏՈՒՐԻ ամէն ջանք ի գործ դրած է մէկ տարին ընդօրինակել այս ամենախոշոր հատորը։

\*

Յիշատակարանէն վերջն ալ կան դեռ ուրիշ գրուածներ, այլ և այլ հիւանդութիւններու համար ղեղեր և ղեղացոյց տոմսեր, որոնք կը գրուին 726էն մինչև

920 էջերը։ Իրարու նման բաներ են աւանդ, մինչև իսկ Զեռագրին միւս մասերուն մէջ արդէն գտնուածներուն կրկնութիւնները։ ասոնց մէջէն կարեւոր կը համարիմ նշանակել միայն Մարդիկ հիւանդութեան մասին գրուածը, որ անկասկած Միխիթար Հերացի բժշկապետին իրատեսերն են։

« Յորժամ իմանաս որ ծաղիկն կամի « ելանել ի մարդն յառաջ քան զամենայն « ի սկիզբն երակ առ և ի կիֆալէն կամ « ի վասիլիկէն, և արին թող ըստ ուժուն « Ապա եթէ յառաջն Մարդիկն երևնա՝ երակ « չ'է պատեհ առնել, զի ահոկէ շատ « ապա գէնի Մարդիկն երևելոյն գարէջուր « տուր յունապով եփած և փրճկած ոսր « և սքանճուպին զուգէ ծծած խիարի « հընտով և եղրդական հընտով և սամիթի « հընտով և զայն տուր խմելոյ։ Ապա եթէ « երակ չկարէ առնուլ, ի գարեջրէն և ի « հով իրաց պատրաստ պահէ և զայս « զեղս տուր որ զծաղիկն ի դուրս հանէ։ « Ա՛ռ փրճկած ոսր ժ տրմ. և քթիւրայ « Եւ տր. և լապլպի հունտ Գ տր. զաւ « մէնն ի մէկ տեղ ի պտուղ մի արկ և « լիտր կէս ջուր լից վրայ եփէ որ ֆիւայ « Գ նուկի, և քամէ և խառնէ յինքն « սակաւ եղ և տուր որ խմէ, կամ առ « բաղեղան ջուր, և քարաւսի ջուր, և « զամէնոյ յիւրար խառնէ և արկ ի ներքս « շաքար և տուր որ խմէ օգտէ։ Բայց « զամենայն ինչ զքո առաջին ջանքն և « զստածումն ի յաչքն արա, որ չի գիտնէ « ծաղիկն ընդ դուրսի աչքն և զայս դեղ « արա։ Առ աղտոր, և վարդէջուր, և քաւ « ցախով զըջէ և սակաւ մի մուղ նոան « ջրով խառնէ ի ներս և զամէնս պարզէ « և զեղ դրով յաչքն դիր... » :

Անշուշտ յանձնարարուած ղեղերը այսօր կարեւորութենէ զուրկ բաներ են, բայց նկատելի է՝ թէ մեր հիւները ո՛րչափ դիտող էին և ո՛րչափ ուշադիր, որպէս զի ԵԱՎԻԿը հիւանդիկն աչքերուն չդիպի. անշուշտ աւանդ սովոր էին ճանչնալ հիւանդութիւնը՝ նոյն իսկ իր յառաջընթաց նշաններէն, որով ըստ այնմ կը յանձնարարէին նաւ

խապահիչ միջոցներ և գլխաւորապէս երաւականութիւնը, արիւն առնելը՝ վիզէն կամ ծոծրակէն: Ո՛րչափ հին է ուրեմն մեր մէջ ալ Մաղիկ հիւանդութեան գոյութիւնը և ճանաչողութիւնը...:

\*

Աւելի չեմ խօսիւր Ձեռագրի մասին, զոր Ս. Ղազարի Հայ բժշկական ձեռագիրներու ընտրեալագոյնը կարելի է համարել իր մարտուր գրութեամբն ու հարուստ պարունակութեամբ: Ամիրտուլվաթի գործերուն բաղդատութեանը համար պիտի կրնայ ծառայել և այս, որ մը ծննդաբերելու (ղծուարին ծննդաբերութիւն) անոնց տպագիր մէկ օրինակը գերծ ախալներէ, աղաւաղումներէ և պակասներէ, զորս զանազան գրիչներ, բայց միշտ Ամիրտուլվաթի սիրահարներ, կամայ և ակամայ սարդեցուցած են իրենց բազմաթիւ ընդօրինակութիւններուն մէջ:

Ուստի վերջանցելով կը կրկնեմ, թէ Ձեռագրիս ընդօրինակուած է՝ յայտնի չէ ո՛ւր՝ 1668ին Գրիգոր ԵԱՏՈՒՐԵԱՆԷ, որ անկասկած բժշկութիւն կ'ընէր ասոր շնորհիւ. յետոյ 1708ին գնած է վայն ՄԻՆԱՍՈՐԻ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ, որ սա ալ անպատճառ բժշկութիւն կ'ընէր, որովհետեւ Ձեռագրին ամենէն վերջի մէկ էջին վրայ գրուած է.

« Ըստեփան թիւիլ որդի թիւիլ Մինաւ սին, որ եմ ամաց ԳԳ (33 ?) և եմ « քրիստոնեա, հատատովլս եմ պայտառ հո. « զովս եմ տկար յոսեալ (յոսացեալ ?) եմ « ոտքը աստուածածինն մայր որ աղայի առ « հայր որ տայցէ րոգոյրիւն իմոց յանցաւ « եացո որ ի մանկութիւն եմ գործեալ մաւ « հաւանդ ամենայն հաւատացեալ քրիստո. « լեից ամեն, թիւիլ փոքր՝ ՌՃԶԹ (1179 « + 551 = 1730) ճերկան ամենանն քսան « և հրկոս ամեն:

Նոյնպէս՝

« Մատուր որդի թիւիլ որ եմ ամաց « հեղեղատանց և ողորմութեամբն աստուծոյ « ոսկեղոց եմ թժկութիւն աստուծի իմ պաւ « տունի հայր Պարոն Մինասին մօտն:

Սոյն երկու Յիշատակարանները ուրեմն, ո՛չ միայն Մինասի բժշկ. ըլլալը կը յայտնեն, այլ և կ'ուսուցանեն՝ թէ Մինաս բժշկ. ինքն ալ բժշկ. որդի ունեցած է Ստեփան անուն, որ 1730ին 33 տարեկան է եղեր, և նաեւ ուսանող՝ աշակերտ մը Մատուր կոչուած, որ սա ալ զաւակ է եղեր բժշկի:

Եւ այսպէս՝ այս ձեռագրիս շնորհիւ 17է 18 դարու բժշկական Պատմութեան մէջ կը յաւելունք չորս բժշկիներու անուն. ներ. 1<sup>o</sup> Գրիգոր ԵԱՏՈՒՐԵԱՆԷ, 2<sup>o</sup> ՄԻՆԱՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆԷ, 3<sup>o</sup> ՍՏԵՓԱՆ ԲԺԺԵԿ (Մինասեան), 4<sup>o</sup> ԵԱՏՈՒՐ ՈՐԳԻ ԲԺԺԵԿ:

ՏՕԹ. ՎԱՆՐԱՄ Ե. ԹՈՂՈՐՄԱՆ

Վեներտիկ — Ս. Ղազար

20 Դեկտեմբեր 1922

(շարունակելի)

Ապերախտութիւնը սրտի անկախութիւնն է:

Լ. ՀԱԼԵՎԻ

Չափազանց զգայնութենէն՝ թշուառութիւն կը ծնանի. չափազանց անզգայնութենէն՝ ոճիր:

Վ. ՀԻԻԿՈՅ

Մարդուս կրթութեան լաւագոյն մասը՝ իր սեփական ջանքով ստացածն է:

ՌԻ. ՍԳՈԹ

Մեռելը ողբալը՝ անբնակ տան դուռը գարնելուն կը նմանի:

ԱԼԻՇԱՆ